ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

241-21

«16» նոյեմբերի 2021 թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ,
Կից ուղարկում ենք համայնքի ղեկավարի 12.11.21թ. թիվ 74-Ա և 15.11.21թ. թիվ 75 որոշումները:
Առդիր՝ 3 թերթ:

ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԺՊ՝ Ս. ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ 74 -Ա
"12 " նոյեմբերի 2021 թ.

ՍՈՒՐԵՆ ԲԵԳԼԱՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, , ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետով, ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի "Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին" թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 18 մայիսի 2006 թվականի "Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին" թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով, քանի որ կառույցները համապատասխանում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված օրինականացման պայմաններին և հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, հաշվի առնելով Սուրեն Բեգլարյանի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ճանաչել Հայաստանի Հանրապետության Վահագնի համայնքի սեփականության իրավունքը, Սուրեն Բեգլարյանի կողմից համայնքային սեփականություն հանդիսացող 06-103-0148-0001, ծածկագրով 0,054374 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասի և ինքնակամ կառուցված արտաքին չափերով՝ 328,10 քմ անասնաշենքի, նկատմամբ, համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:
2.Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Վահագնի համայնքի սեփականության ճանաչված՝ այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտի իրավունք չառաջացնող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հողվածով սահմանված հողամասերի ցանկում չընդգրկված, Սուրեն Բեգլարյանի կողմից համայնքային սեփականություն հանդիսացող 06-103-0148-0001, ծածկագրով 0,054374 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ

արտադրական նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցված արտաքին չափերով՝ 328,10 քմ անասնաշենքը:

3. Դիմել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Լոռու մարզային ստորաբաժանում, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վահագնի համայնքի անվամբ պետական գրանցում կատարելու համար:

Համայնքի ղեկավարի ԺՊ՝ Ս.Վարդումյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Վահագնի համայնք, հասցե գ. Վահագնի, հեռախոս 077-78-50-82

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» Նոյեմբերի 2021 թվականի N 75

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով,

Որոշում եմ

1. 06-103-0148-0001 կադաստրային ծածկագրով 0.054374 հա. մակերեսով բնակավայրին տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ գ. Վահագնի 1-ին փողոց 5-րդ նրբանցք 17 փոստային հասցե:
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԺՊ՝ Ս. ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

2021 թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 15